ԿԱՐԾԻՔ

Թ.00.01 - փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող

ՕՎՍԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ՝

«ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»

ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում գիտական պատշաճ հիմնավորվածությամբ քննարկվում է արդի փիլիսոփայության կարևոր հիմնախնդիրներից մեկը՝ մարդու սոցիալ-մշակութային կեցության այլակերպումները որպես արդի գոյաբանական զարգացումների հետևանք: Դեռևս քիչ են հայ գիտնականների կողմից արդի գոյաբանական մարտահրավերների փիլիսոփայական իմաստավորման փորձերը: Եվ, քանի որ այդ մարտահրավերները հաճախ վտանգում են սոցիալ-մշակութային ազգային ինքնությունը և թուլացնում են ազգային համակեցության հիմքում եղած կապերը, **ատենախոսության թեման արդիական է:**

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում մարդու սոցիալ-մշակութային կեցությունն իմաստավորվում է սահմանազանցման տարբեր դրսևորումների համատեքստում: Վերջինս դիտարկվում է որպես մարդու գոյության առանցքային եղանակ: Քննարկվում են մի շարք արդի գործընթացներ, որոնք խաթարում են մարդու գոյաբանական ամբողջականությունը: Ատենախոսը ցույց է տալիս, թե ինչպես մարդը «*աստիճանաբար հեռանալով իր կենսաբանական, սոցիալական և պատմական հիմքերից, վերածվում է վիրտուալ-տեխնիկական գոյության ձևի*» /էջ 84/:

Երկրորդ գլխում մարդու սոցիալ-մշակութային կեցությունը դիտարկվում է որպես բեմ, որտեղ դիմակավորված անդեմությունը դառնում է հետարդիական մարդու հիմնական սոցիալ-մշակութային բնութագրիչ: Մասնավորապես, դեմքի և դիմակի հակամարտությունում իրական Ես-ի պարտությունը և «վիրտուալ արտացոլանքի» վերածվելն ատենախոսը բացատրում է նրանով, որ «*դիմակը միաժամանակ և՛ սահմանազծման և՛ սահմանանցման գործառույթ կատարելու*

հատկություն ունի» /էջ 91/: Նա իրավացիորեն պնդում է, որ «*ժամանակակից մարդու կեցության համար սովորական են դարձել այնպիսի վիճակներ, ինչպիսիք են օտարումը, լուսանցքայնությունը, ավելորդությունը*» /էջ 136/, պայմանավորված մարդկության սոցիալական համակարգի ճգնաժամով: Երկրորդ գլուխը սոցիոմշակութային ճգնաժամի պայմաններում առաջացող այդ վիճակների վերլուծության և փիլիսոփայական իմաստավորման հաջողված փորձ է:

Ատենախոսության գիտական դրույթները և եզրահանգումները մեթոդապես հիմնավորված են և հետևողականորեն փաստարկված: Ատենախոսության գիտական արժեքը կարևորվում է ոչ միայն դուրս բերված եզրահանգումների հիմնավորվածության և հուսալիության տեսակետից, այլ նաև մեծածավալ նյութի մշակվածության առումով: Հեղինակն իրեն հասու լեզուներով հրատարակված մեծածավալ գրականություն է ուսումնասիրել և երկրորդային վերլուծության ենթարկել: Ատենախոսի կողմից ստացված գիտական արդյունքների հիմնավորվածությունն ու հուսալիությունը հաստատում է տարաբնույթ գիտական ուղղվածություն ունեցող հայեցակարգերի, տեսական մշակումների և համաշխարհային նշանակության առաջատար փիլիսոփաների մեթոդաբանական մոտեցումների օգտագործումը:

Ատենախոսական աշխատանքը կատարված է բարեխղճորեն և գրագետ: Ատենախոսության մեթոդաբանական առանձնահատկությունն այն է, որ ատենախոսը իրականացրել է համալիր փիլիսոփայական ուսումնասիրություն: Պետք է նշել, որ անդրադառնալով հիմնախնդրի տարբեր փիլիսոփայական իմաստավորումներին, ատենախոսը ցուցաբերում է հեղինակային մոտեցում: Հատկապես արժեքավոր ենք համարում հեղինակի կողմից կիրառված համեմատության մեթոդը, որը «*օգտագործվել է իրական և վիրտուալ ինքնությունների սահմանազատման, նրանց գոյաբանական և ճանաչողական տարբերությունները բացահայտելու և բնութագրելու առնչությամբ*» /էջ 8/: Տարբեր մեթոդների համալիր կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնել մարդու սոցիալ-մշակութային կեցության վերլուծությունը արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում:

Ուսումնասիրելով հարուստ տեսական նյութ՝ ատենախոսը փաստարկում է, որ «սահմանազանցումը մարդու էության և ինքնության վերաիմաստավորման

փորձառություն է, ինչը նրան հնարավորություն է տալիս վերափոխել աշխարհն ու վերաիմաստավորել իր տեղն ու դերն այդ աշխարհում» /էջ 11/: Այստեղից բխում է, որ սահմանազանցումը կարևոր դերակատարություն ունի արդի գոյաբանական մարտահրավերներին դիմակայելու գործում: Սակայն, խնդիրը միանշանակ չէ, և ատենախոսը շատ ճիշտ է նշում, որ սահմանազանցումը «կարող է վերածվել ինչպես ինքնաբացահայտման ու ստեղծագործական վերելքի, այնպես էլ արժեքային քայքայման ու օտարման աղբյուրի» /էջ 81/: Մեկ այլ տեղ կարդում ենք. *«աշխարհը կորցրել է իր տարածական սահմանները և ժամանակակից մարդը դարձել է «քոչվոր» ու ստիպված է թափառել, որպեսզի իր անհատական դեգերումներին հաղորդի նպատակաուղղված շարժման տեսք» /էջ 23/:* Շարունակելով այս միտքը ատենախոսը առանձնացնում է սահմանազանցման երեք ուղղություն. *«ա/ գոյաբանական սահմանազանցում,... բ/ սոցիալական սահմանազանցում,... գ/ մշակութային սահմանազանցում...»* /նույն տեղում/: Այդ տիպաբանությունը կարևոր է հասկանալու համար հեղինակի կողմից հաջորդիվ օգտագործվող «դիմակով մարդը», «զորանոցի մարդը», «ավելորդ մարդը» հասկացությունների փիլիսոփայական իմաստը:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետևյալ արդյունքներով՝

- Ատենախոսության մեջ պատշաճ կերպով ներկայացված է սահմանազանցման որպես ապակառուցոզական ընդվզման դերն ու նշանակությունը արդի գոյաբանական մարտահրավերներին դիմակայելու համար:
- Ատենախոսին հաջողվել է առաջադրել նոր հետազոտական խնդիր, ցույց տալ, որ սահմանազանցումը կարող է հակասական հետևանքներ ունենալ. նպաստել ստեղծագործական վերելքին կամ հանգեցնել արժեքային քայքայմանը և առաջացնել մարդու ինքնությանը սպառնացող վտանգներ: Արժեքավոր է կառուցողական և ապակառուցողական դրսևորումների սահմանների հստակեցումը:
- Շատ արժեքավոր է ատենախոսի կողմից սահմանազանցման ուղղությունների տիպաբանումը: Դա մեթոդաբանական նոր հնարավորություն է ստեղծում երևույթի հետագա ուսումնասիրությունների համար:

- Ատենախոսն իրավացիորեն կապ է մատնանշում *«ցանցային հաղորդակցության»* և *«չափահասությունից կամավոր հրաժարված հասարակության»* միջև: Դա հետաքրքիր հարցադրում է:

Հեղինակի ստացած արդյունքների **կիրառական նշանակությունն** այն է, որ ատենախոսությունը կարող է կիրառվել որպես դասախոսական նյութ բուհերում փիլիսոփաների, քաղաքագետների, սոցիոլոգների, հոգեբաների, հումանիտար ոլորտի մասնագետների պատրաստման համար:

Ատենախոսական աշխատանքը զերծ չէ որոշ **թերություններից**՝

-Ատենախոսը չի համադրել իր կողմից օգտագործված տարբեր հասկացությունները՝ «դիմակով մարդ», «զորանոցի մարդ», «ավելորդ մարդ»:

Դրանք նույն հետարդիական մարդու տարբեր բնութագրիչներ են, ոչ թե մարդկային առանձին տիպեր:

-Ատենախոսը սահմանել է սահմանազանցումը «որպես վերջավորի սահմաններից դուրս գալու և կեցության լիարժեքության հասնելու ձգտում» /էջ 17/, բայց չի մանրամասնել, թե բովանդակային առումով ինչ է իրենից ներկայացնում այդ ձգտումը: Այնինչ հենց այստեղից է սկսվում սահմանազատման հիմնախնդրի ուսումնասիրության մի շատ կարևոր, բայց ատենախոսությունում չպարզաբանված առարկայական դաշտ՝ սահմանազանցման սահմանազանցումը:

-Ատենախոսը պնդում է, որ «մարդու կյանքը միջնորդավորված է սոցիալական, բարոյական և այլևայլ նորմերով ու օրենքներով» /էջ 18/: Անհասկանալի է, թե ինչու է բարոյականը տարանջատվում սոցիալականից: Նույն տրամաբանական վրիպակն է նաև 24-րդ էջում, որտեղ գրված է. «մշակույթի սահմանները, որոնք սահմանված են բարոյական կամ իրավական չափանիշներով...»: Սակայն մշակույթն ավելի մեծ ծավալի հասկացություն է. «մշակույթը...միաժամանակ ունի ինչպես սահմանող, այնպես էլ սահմանագծող և սահմանազանցող գործառույթներ» /էջ 30/:

-Գրականության ցանկում տեղ չէն գտել թեմայի մշակվածության առումով կարևոր հեղինակներ, ինչպիսիք են. Ի.Գոֆմանը /«The Presentation of Self in Everyday Life»/, Ի.Բեռլինը /«Two Concepts of Liberty»/, Ա.Մկրտիչյանը /«The Post-Soviet Freedom: between the Past and the Future»/, Ա.Ոսկանյանը /«HOMO TRICKSTER, կամ

էսթետիզմի ծուղակները»/, փոխարենը նշված է ուսումնամեթոդական ձեռնարկ /համար 72/:

Նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը, այլ առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար: Թեկնածուական ատենախոսությունը կարող է գնահատվել որպես փիլիսոփայության բնագավառում նոր խնդրի առաջադրում:

Ատենախոսի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հեղինակի հիմնական ձեռքբերումները:

Եզրակացություն

Օ. Լ. Նահապետյանի՝ «Մարդու սոցիալ-մշակութային կեցությունը արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում» Թ.00.01 - փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը հանդիսանում է ավարտուն գիտահետազոտական աշխատանք, որը վերաբերում է տեսամեթոդաբանական և գործնական առումով արդիական թեմայի: Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման սահմանված պահանջներին, այն հանդիսանում է ամբողջական և արդիական գիտական աշխատանք:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ ատենախոսության հեղինակ Օ.Լ.Նահապետյանը արժանի է Թ.00.01 - փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մկրտիչյան

«Ա. Մկրտիչյանի ստորագրությունը հաստատում եմ»:

Երևանի պետական համալսարանի գիտնական քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

16.04.2026